# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

### ՌՕՍՍԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՌՈՃԻԿՆԵՐ։

Սակաւ է պատահել, որ Թիֆլիսի ամեն աղղի հասարակութիւնը այնքան սիրով, այնքան մեծ ներքին զմայլքով և միևնոյն ժամանակ այնքան աղնիւ ձգտումով իրան անձնատուր արած լինի բարձր դեղարուեստին, որքան այս յունիս ամսին։ Վաղուց յայտարարուած Էրնեստո Ռոսսի'ի գալուստը կատարուեց միայն մի օր աւելի ուշ, քան սպասւում էր և անմ սկսեց սերիան այն փայլուն ներկայացումների, որոնք Ռոսսիի հետ կապեցին Թիֆլիսի մանաւանդ ինտելիգենտ դասակարգի ուշադրութեան մեծ մասը։ Հասարակութեան ջերմ վերաբերմունքի մէջ դէպի Ռոսսին չէր կարող խառը լինել մի որ և իցէ անգամ հեռաւոր միտք՝ որ դուրս լինէր բուն դեղարուեստի հետաքրքրութեան շրջանից։ Եւ իւր մեծ յաղթանակով որ տարաւ Ռոսսին մեզանում, նա պարտական է միայն և միմիայն իւր բարձր, հաղագիւտ տաղանդին՝ ներկայացնել ամենամեծ տիպարները, որ ստեղծել է եւրոպական դրաման, դլխաւորապէս եւրոպական դրամայի մեծ ստեղծողը՝ Շեքսպիր։ Այսպիսով մեր հասարակութեան ջերմ վերաբերմունքը պէտք է բացատրել այն մեծ կարօտով, որ նա զգում է տեսնել մի բարձր մարդկային կասարելութիւն՝ ընդունակ մարդկային մեծ տիպերը ներկայացնել այնպէս, որ հանդիսատեսը աչքախաբ լինի, բեմը ընդունելով իսկական աշխարհ, դերասանին՝ իսկապէս գործող անձի տեղ։

Դորա մէջն է կայանում արտիստական կատարելութիւնը. և Էրնէստո Ռոսսի ապացոյցներ տուց, որ ի զուր չէ ամբողջ լուսաւորեալ աշխարհը դասում նորան դարուս մեծ արտիստների շարքում։

Եւ մենք դիտենք, թէ որքան հաղագիւտ են այդպիսի աստղեր, որպիսիներից մէկն է Ռոսսի։ Անդլիան ունեցել է մի Կէմբլ և մի Քին, իսկ այժմ նա ունի Իրվինդ։ Ֆրանսիան ունի մի հատ Մունէ-Սիւլլի, Դիւման-

նիան՝ Էրնստ Պոսսարտ. և Լուդվիգ Բարնայ, եթէ հաշուելու չը լինենք երկրորդականներին, ինչպիսիք են Վիեննայի Ադոլֆ Զոնենթալ, Համբուրգի Ֆրիդրիխ Հադէ, Միւնխէնի Ադոլֆ Կնօրր, Բերլինի Մաքս Գրուբէ, Մայնինդէնի Տելլեր և այլն. Լեհացիք ունէին մի Նան Կրուլիկովսկի և Ժուլկովսկի, որոնք Նորերումս մեռան առանց որ ուրիշները նոցա փոխարինել կարողանային։ Իտալիան ունի բեմական արհեստի հսկայ, բայց արդէն խորը ծերութեան մօտեցող Տօմասսօ Սալուինի և արդէն վաթսունականը անցած Էրնեստօ Ռոսսի։ Ռուսիան ունէր բարձր դրամայի համար մի Սամօյլով և մի Միլլսալսկի, իսկ այժմ չ'ունի չէքսպիրեան բեկերտուարի համար և ոչ մի մեծ աստղ, եթէ այլ և այլ Զարսկի, Լէնսկի, Իւանով-Կաղելսկի, Իւժին՝ լուրջ չէքսպիրիստներ համարելու չը լինենք, որպէս նոքա չեն էլ ընդունուում։ Մեծ ողբերգներից կը մնայ մեզ լիշելու միմիայն Պեարոս Ադամեանին, որը եթէ աչխարհահռչակ չէ, դրանով չի պակասում նորա բնատուր մեծ տաղանդը, թէպէ հանդամանքները նրան չեն ներած բնականին հետ միացնել նաև ստացականը այն աստիճանով, որքան այդ երևում է Ռոսսիի վերայ։

Եւ ստացականը մեծ տեղ է բռնում Ռոսսիի արհեստի մէջ. նորա ներկայացումը կատարեալ ուսումնասիրութիւն է ամեն մի չարժուածքի, ամեն մի դիրքի. բայց բնատուր ձիրքը այնքան մեծ է, որ զգացածին և մտածածին համապատասխանում է գործադրելու, ցոյց տալու կարողութիւնը լիակատար կերպով։

Ռոսսին մի լատկութիւն ունի, որ չի կարելի բաւականաչափ գնահատել. այդ այն է, որ նա չի աչխատում անպատճառ էֆէկտ գործել, նա չի զօռում, հակառակ պիեսի իմաստի, երևալ այն, ինչ չի պահանջում. նա համբերութեամբ սպասում է մինչև որ տեղը կը դալ իւր տաղանդի բոլոր ուժը ցոյց տալու համար։ Թէ չէ նա առհասարակ հաւասարութիւն գիտէ պահպանել իւր խաղի մէջ. ոչ մի տեղ նա թոյլ չէ։

Մեծ արտիստների ընդունակութիւններին պատկանում է այն ձիրքը, որով նոքա կարողանում են կերպարանափոխուել բեմի վերայ և ամեն մի դերի մէջ ներկայանալ ոչ միայն ուրիշ դէմքով. այլ և ուրիշ ձայնով։ Բայց և այնպէս Ռոսսիի լատուկ մեղմ բարիտոնական ձայնը լսելի է այդ ձայնի բոլոր փոփոխութիւնների հիմքում։

Ռոսսին, այսպէս է իմ տպաւորութիւնը, հանդիսատեսին սկզբից չի նաձում. և չի էլ երևում, որ նա ցանկութիւն ունենայ հէնց սկզբից գերել հանդիսատեսի ուշադրութիւնը։ Ռոսսիի մեծութիւնը աստիճանաբար է երևան գալիս և վերջը թողնում է մի հսկայական տաղանդի տպաւորութիւն։

Ռոսսին մեծ բէալիստ է բեմի վերայ. և բնաւորութիւնների, տիպերի ուսումնասիրութեան վերայ հիմնուած խաղը ինչպէս կարող է բէալական չը լինել և չ'արտադրել բէալիստ խաղացող։ Միայն թէ բէալիստ ասելով,

առհասարակ հասկանում են այն, որ, հետևելով իրականութեան, արտիստը, կամ գրողը հաճոյք է զգում տգեղ տեսարանները իրանց իսկական տգեղութիւնով ներկայացնել, չը վախենալով անգամ զզւանք յարուցանելուց հանդիսատեսների կամ ընթերցողների մէջ։ Ռոսսին, սակայն, որքան ինձ յաջողեց հետևել նորա ներկայացումներին, և ոչ մի անգամ չը մատնեց այս զգացմունքը, թէ իբր նա խորշում է այդ տեսակ տեսարաններից, բայց ոչ մի տեղ նա ցոյց չը տուեց, թէ հաճոյք է զգում անպատճառ այդ տեսակ տեսարաններ ներկայացնելուց։ Երբ նա հաւանում է մի որ և իցէ տիպ և կարծում է թէ այդ տիպը ներկայացնելու համար պահանջւում է մեծ, անսովոր տաղանդ,—Ռոսսին պատրաստ է նորան ներկայացնելու, միևնոյնն է թէ այդ տիպը, ինքն ըստ ինքեան ասած, որքան դիւրեկան է հասարակութեան։ Ինչ մի դիւրեկան տիպ է Դրլավիլնի Լուդովիկոս XI, իւր ծածկամիտ, խստաբարոյ, գազանաբարոյ, նենգամիտ, թէև ժողովրդասէր բնաւորութիւնով, զառամնալ ծերունի՝ զզւելի դիմագծերով և, օրինակ հէնց լեզուն կախ անելու սովորութիւնով։ Բայց Ռոսսին կատարեալ ստեղծողն է այդ տիպի, չը նայած որ Դրլավիլնի այդ դրամայի անունն իսկ չատերը միայն Ռոսսիի պատճառով առաջին անգամ լսեցին։

Ինչ վերաբերում է բէալականութեան, ես կարող եմ առհասարակ նկատել, որ դա այժմ իշխող ձգտումն է բոլոր նշանաւոր արտիստների. միայն թէ բէալականութիւն ասելով հասկանանք ոչ թէ իսկական կեանքի տգեղութիւնների համար ունեցած ճաշակը, այլ ձգտումն՝ նաև հերոսական ֆիգուրները իջեցնել մինչ իրական կեանքի միջինը։ Այդ ձգտումն ունի մանաւանդ Լիւդվիգ Բարնայ, որի 30-ամեայ արտիստական գործունէութիւնը անցեալ մայիս ամսի 2-ին ասնում էր Բերլինը։ Նա ևս, բայց զեռ աւելի քան Ռոսսին, իւր խաղով աւելի դիմում է հասարակութեան սառը դատողութեանը, քան զգացմունքին։ Եւ ահա ինչու առաջին անգամից չի գերում հանդիսատեսին, այնպէս որ Բարնայի խաղը իսկապէս վայելելու համար, հարկաւոր է նորան յաճախ տեսնել։

Մի բան, որ Ռոսսիին դարձնում է մանաւանդ դնահատելի, այդ այն է, որ իւր արտիստական հանճարի հետ նա միացնում է մի կատարեալ ջենտլմենն մարդու կրթութիւն։ Նա առհասարակ իւր հայրենիքի լուսաւոր մարդկանցից մէկն է։ Եւ հայրենասէր է նոյնքան, որքան անձնատուր իւր արհեստին։

Ով է Ռոսսին։

Էրնեստո Ռոսսի ծնուց Իտալիայի Լիւորնո քաղաքում, 27 ապրիլի 1830 թ.։ Նորա հայրը, Ջուզեպպէ (Յովսէփ) Ռոսսի վաճառական էր և կաւալերիստ Նապոլէոն I-ի զօրքում։ Էրնեստո Ռոսսիի հակումը դէպի թատրոնը արտայայտւում էր դեռ փոքր հասակից, իսկ հայրը ուզում էր նորա համար բացել գիտնական ասպարէզ և ամեն միջոցներով դիմադրում էր նորա թատրոնական ձիրքին։ Մտնելով Պիզանի համալսարանը իրաւա-

կան գիտութիւնները ուսանելու համար, երիտասարդ Ռոսսին չը կարողացաւ նրանց ամբողջապէս անձնատուր լինել։ Իւր ուսանողական տոկուն աշխատութիւնների մէջ նա ժամանակ էր գտնում դրամատական և առհասարակ գեղարուեստի լաւագոյն նմուշները կարդալու համար։ Մի անգամ, իւր հոր բացակայութեան ժամանակ (և այդ ժամանակ Ռոսսին 14 տարեկան էր) սենեակներից մէկում, որը բանկի համար էր նշանակուած, նա փոքրիկ թատրոն շինեց, ուր նա առաջին անգամ խաղաց իւր ընկերների հետ մի իտալական դրամա։ Երբ հայրը վերադարձաւ, նորա առաջին գործն եղաւ՝ ջնջել այդ նոր սարքուած թատրոնը և այրել դիկորացիաները և վարագոյրը։ Բայց ոչ մի սպառնալիք չը կարողացաւ հանգցնել երիտասարդ Ռոսսիի սրտում նորա ձգտումները դէպի թատրոնը։ Թատրոնը դառաւ նորա համար ամեն բան։ Նորան չէր հրապուրում ոչ փաստաբանի փայլուն ապագան, ոչ գիտնականի փառքը, ոչ հոր ժառանգութիւնը։ Իւր կիրքին չը կարողանալով դիմադրել, նա թողեց համալսարանը, միացաւ մի թափառող թատրոնական խմբի հետ և գնաց Ֆոնանո, որ մի փոքրիկ քաղաք է Տոսկանայում։ Ամեն անգամ բեմ դուրս գալը նրան տալիս էր ոչ աւելի քան մի ֆրանկ։ Ահա այսպէս է սկսւում արտիստական գործունէութիւնը այն մարդու, որը մեծ հռչակ է ստեղծել Եւրոպայում և Ամերիկայում։

1848 թւականին Ռոսսին թողեց այդ խումբը և միացաւ Կալլանդ'ի, Զեղարինի'ի և Մարկի'ի խումբի հետ։ Այդ եղաւ Գենուայում, երբ մի գիտնական ժողով էր գումարուել այնտեղ։ Այդ ժամանակ այդտեղ էր և Գուստաւ Մօդենա, որը իտալական ամենաերեելի դերասաններից էր և, այսպէս ասած, նախահայրն է նոր շկոլայի։ Նա եկած էր այդտեղ խումբ կազմելու տաղանդաւոր դերասաններից։ Մի տարի յետոյ Ռոսսին միացաւ այդ խմբի հետ, որի ներկայացուցիչները երիտասարդութիւնից էին և որի մէջն էին այնպիսի մեծ անուններ, ինչպէս՝ Թոմազո, Սալուինի, Բելոտտի-Բոն և Պոմպեի։ Բայց չուտով արևմտեան Եւրոպան ճանաչեց Ռոսսիի մէջ մի աւելի տաղանդաւոր արտիստ։ Վերը լիշուած արտիստները պատկանում էին հին կլասիկական շկոլային, մինչդեռ Ռոսսին ռէալիստ է։ Երբ Ռոսսին Գուստաւ Մօդենայի հետ Միլանումն էին, երիտասարդի և իւր հոր մէջ հաշտութիւն կայացաւ։ Իմանալով որ իւր որդին Միլանումն է, ծերունին ուղարկեց Միլան և ներկայ եղաւ Ռոսսի'ի ներկայացմանը Դաւթի դերի մէջ՝ Ալֆիերի'ի «Սաուլ» ողբերգից, իրան ծածուկ պահելով։ Երբ ողբերգը վերջացաւ, Ռոսսի'ի հայրը գնաց բեմը և երես առերես կանգնելով իւր որդու հետ, ասաց՝ «Ես կարծում էի, թէ ձեզնից չուն է դուրս գալու, բայց այժմ տեսնում եմ որ սխալուած եմ, և դորա համար ես ձեզ ներում եմ»։

Թողնելով Գուստաւ Մօդենային, Ռոսսին կազմեց իւր սեպհական խումբը, որի հետ և ճանապարհորդեց մի քանի տարի ամեն տեղ գտնելով մեծ յաջողութիւն։ Յետոյ նա հրաւիրուեց «Սարդինեան թագաւորական խումբի» համար, որը պահպանում էր Պիեմոնտի (այժմեայ իտալական թագաւորա-

կան տան) թագաւորի հաշուով։ Խաղալով Ֆուրինում և Կարենեանում, Ռոսսին ունեցաւ անագին յաջողութիւն գլխաւորապէս դրամատական գերերում։ 1855-ին Ռոսսին միասին Աղելաիդա Ռիստորի՝ի հետ գնաց Պարիզ, ուր նա նմանապէս հասարակութեան սիրելի դառաւ՝ Ժիւլ Ժանէն, Թէոֆիլ Գոթիէ, Սէն-Պոլ, Վիկաոր, Ալեքսանդր Դիւմա, Արագո և այն ժամանակուայ ուրիշ հռչակաւոր անձեր վերաբերումամ էին դէպի նա մեծ յարգանքով և գուշակում էին փայլուն ապագայ Ռոսսի՝ի համար։ Ռիշելիէի փողոցի ֆրանսիական թատրոնի դիրեկտոր Սանսոն ուզեց կապել Ռոսսի՝ին իւր թատրոնի հետ, առաջարկելով նրան լինել իւր պէնսիոնները, բայց, Իտալիայի բաղդից, Ռոսսին չ՝ընդունեց։

1856-ին պարլամենտը դադարեցրեց օժանդակութիւն տալ «Սարդեան» խմբին, և Ռոսսին նորից իւր խումբը կազմեց, որի հետ և գնաց Վիեննա, իսկ յետոյ գերմանական ուրիշ քաղաքներ, ամեն տեղ ծանօթացնելով իտալական ազգային նշանաւորագոյն դրամատական գրողների հետ, որպիսիներից էին Գոլդոնի և Ֆերրարի։

Վերադառնալով հայրենիք, Ռոսսին սկսեց խաղալ անգլիական մեծ գրող Շէքսպիր՝ի ողբերգների մէջ, որի ուսումնասիրութեանը նա իրան ամբողջապէս անձնատուր արաւ։ Սկզբում այդ ողբերգները հասկանալի չէին իտալացիներին, բայց Ռոսսին, ժողովրդականացնելով նոցա, ստիպեց իւր հայրենակիցներին սիրել Համլետ, Օթելլո, թագաւոր Լիր և ուրիշները։ Բայց խաղալով և սքանչանալով Շէքսպիրից, նա չէր մոռանում և իտալականներին և Մուրատորի՝ի, Պոմելլի՝ի, Նոբիլի՝ի կոմեդիաների մէջ նա նոյն յաջողութիւնն ունէր, ինչպէս և Շէքսպիրի ողբերգների մէջ։

Բացի թատրոնից, Ռոսսին յայտնի է Իտալիայում նաև որպէս դրամատական գրող։ Նորա դրամաները, որպէս վկայում են գիտցողները շատ ռէալական են և որոշում են զգացմունքի խորութիւնով։

Բացի դրամաներից, նա գրել է շատ քննադատական յօդուածներ և առանձին բրոշիւրներ դրամատական արուեստի մասին։ Եւ որպէս մի նմուշ, թէ ինչպէս է նա նայում գեղարուեստի վերայ, կարելի է բերել հետևեալ նամակը, որին առիթ տուող եղաւ Biblothèque Universelle ամսագրի 1876 թ. հոկտեմբերի տետրակում գրուած այս յօդուածը «Համլետը Ժընեւում»։ Այդ յօդուածը գլխաւորապէս նուիրուած էր Էրնեստո Ռոսսի՝ին։ Ժընեի կրիտիկոսը, անուանելով Համլէտին «ծնունդ հիւսիսի և մառախուղի», յանդիմանում է Ռոսսի՝ին սորա աւելորդ կրքոտութեան համար, որ նա մտցնում է Համլէտի գերի մէջ։ Ահա Ռոսսի՝ի նամակը, որ տպւեց նոյն ամսագրի 1877 թ. փետրուարի տետրակում։

Բոլոնիա, 3 նոյ. 1876.

Մեծ. պարոն։

«Դրամատական արտիստի փառքը երկարատև չի լինում։ Նա վերջանում է սովորապէս այն սերնդի հետ միասին, որին դերասանը

պատկանել է։ Յետոյ այդ փառքից միայն անունն է մնում, որը գնալով նուազում է, դառնում հեռաւոր արձագանք, որին այլ ևս լետաղայ սերունդը ուշադիր չէ։ Եթէ նորա անունը տպւած երևում է մի գրքի վերնագրի մէջ, սորա վերայ նայում են որպէս ապրանքի նմուշի վերայ։ Գնողը մօտով է անցնում և կանգ է առնում մի ուրիշ մագազինի առաջը. գնի մասին մտածմունքներ է անում և, վերջապէս, վճռում է գնել, բիսկ անելով, որ, փոխանակ ցանկացած ապրանքի, կ'առնի նորա մի վատ կեղծիքը։ Այսպէս եղաւ ճակատագիրը Գարրիկ'ի, Ռինո'ի, Տալմայի և Մօդենայի։ Ինչու նոցը չի կարող կրկնուել նաև ինձ հետ, որը գուցէ նոցանից աւելի ստոր է կանգնած։ Ակնուամենայնիւ, երբ մի արտիստ, իւր ճամբորդութիւնների մէջ, հանդիպում է մարդկանց, որոնք կարողանում են անալիզ անել նորա խաղը, քննադատել նորան, նոր լոյս գցել նորա վերայ և ուսանելի ցուցմունքներ անել՝ այդպիսի ուշադրութիւնը արտիստին ծառայում է իբր բաւական վարձատրութիւն նորա աշխատանքի համար, հաշտեցնում է նորան ներկայիս հետ և հանգստացնում ապագայի նկատմամբ, այլ ևս չը վախենալով մոռացումից՝ չնորհիւ խելացի քննադատութիւնից արած տպաւորութեան։

Այդպիսի մտքեր ծագեցին իմ մէջ, երբ մի քանի օր առաջ կարդացի Ձեր հիանալի մտածած լօդւածները Շեքսպիրի Համլետի մասին և թէ ինչպէս կատարեցի ես այդ դերը անցեալ լունիս ամսին Ժընեւում տւած ներկայացումների ժամանակ։ Ես բարձր եմ գնահատում Ձեր ցուցմունքները այդ՝ այնքան դժւար տիպի ներկայացման մասին, ցուցմունքներ, որոնք լենում են շատ հռչակաւոր մարդկանց բացատրութիւնների վերայ, և դոցա թւում՝ Գեօթէ'ի բացատրութիւնների վերայ, որ Դուք վկայ էք բերում։ Ակնուամենայնիւ ես կարծում եմ, որ առանց տեղիք տալու որ ինձ լանդիմանեն անձնապաստանութեան համար, կարող եմ լայտնել, որ մի քանի կէտերում ես տարաձայն եմ Ձեզ հետ։

Ես ևս, իմ կողմից, լանձն եմ առած լինել բացատրողը հանրամարդկային բանաստեղծի և ներկայացնողը նորա մտքերի։ Ես ասում եմ՝ «հանրամարդկային»՝ որովհետև հենց այդ էպիտետի վերայ ես կ'ուզէի կանգ առնել, որ ըստ կարելոյն արդարացնեմ իմ կարծիքը Համլէտի մասին և այն կերպը, որով ես նորան ներկայացնում եմ։ Զարաբաղդ դանիական իշխանաղնի մէջ ես չեմ տեսնում լոկ մի իւրատեսակ մարդ, որդի հիւսիսի, ձևաւորւած նորան չրջապատող բնութեան մառախուղների ազդեցութեան տակ։ Ըստ իս, դա մի մարդ է, որ սարսափահար է եղած երկու զարհուրելի ոճիրներից՝ իւր հօր սպանումից և իւր մօր սիրային դաւաճանութիւնից,—և որը, այդ հանգամանքներում, թէկուզ նա ծնւած էլ լինէր կապոյտ երկնքի տակ և արևդակով տաքացրած հողի վերայ, չէր զգալ այդ երկնքի գեղեցկութիւնը և այդ արևդակի բարերար ազդեցութիւնը։ Նորա հոգին կը չարչարւէր նոյն լուսատատութիւնից, նորա խելքը կը լուղէր

նոյն հակադրութիւններով և նոյն կասկածանքներով. նորա մարմինը կը թուլանար նոյն անգործութիւնից։ Համլէտը—համաշխարհային տիպ է։ Նա պատկանում է բոլոր ժամանակներին և բոլոր ազգերին. հեռացրէք այդ բոլոր տեսիլքները, սառնամանիքը և մառախուղները, որոնցով չրջապատել է նորան հեղինակը, տեղափոխեցէք նորան Նէապոլիս, և թող նա լինի այնտեղ ճակատագրի նոյն հարուածների զոհը,—և դուք նորան այնպէս կը տեսնէք, որպէս Շէքսպիրն է ներկայացնում նորան՝ լիքը լուսահատութիւնով, սաստկացրած կասկածներով և անվճռողականութիւնով գործելու մէջ։ Եթէ Շեքսպիրը ուզենար նորան ներկայացնել իբր բացառութիւն, նա շատ նսեմացրած կը լինէր այդ վիթխարի գործքը։ Որպէս Էսքիլէսը իւր Պրոմեթեոսի մէջ կամեցել է ներկայացնել մարդկութիւնը, նոյնպէս և Շեքսպիրը, ստեղծելով Համլէտին, ասաց աշխարհին՝ «Ահա քո մարդը, դիտիր նորան և դու քեզ ինքնիդ կը ճանաչես»։ Այսպէս ես հասկացայ Համլետին և, ներկայացնելով նորան, ես աշխատել եմ նրան տալ ոչ թէ այնպիսի գծեր, որոնք բնորոշ են մի որ և է երկրի կամ ազգի համար, այլ գծեր, որոնք յատուկ են բոլոր երկիրներին, բոլոր ազգերին։ Արուեստի մէջ չը կայ բան, որ աւելի սպանիչ լինի քան աւանդութիւնը, դորա վատ պտուղները մենք տեսնում ենք Անգլիայում։ Այն ինչ պալատ էր՝ դառել է խրճիթ, իսկ նաւը դառել է ընկուզի կճէպ»։

Արուեստական, գրական և գիտնական աշխարհին պատկանողը՝ ջերմ երկրպագուներն են Ռոսսիի։ Խորը զգացած նորա խաղից, Իտալիայի այժմեայ թագաւորի հայր Վիկտոր Էմանուէլը պարգևեց նրան սբ. Մաւրիկիոսի շքանշանը, Բրազիլիայի նախկին կայսրը անձամբ պարգևել է նրան Վարգի շքանշանը, նախկին իսպանական թագաւոր Ամեդէյը—կաթոլիկ Իզաբելլայի շքանշանը, Պորտուգալիայի թագաւորը՝ սբ. Նագոի շքանշանը, կրկին Իտալիայի թագաւորից՝ իտալական թագի շքանշանը, Հոլլանդիայի թագաւորից՝ Կաղնի'ի շքանշանը և այլն.

Ռոսսի'ի ընկերները նոյն համակրութիւնով են վերաբերում դէպի նա, որպէս և նորա երկրպագուները։ Իւր վարուղութեան մէջ դէպի նրանց նա հաւասար է՝ լինին նոքա անուանի արտիստներ թէ նոր սկսողներ, որոնց նա ամենաբարեկամական խորհուրդներ է տալիս։ Ռոսսին սիրում է արուեստը, և ամեն եռանգով նա ծառայում է նրան։ Եւ նորա յատկութիւններից մէկն է՝ երբէք չը կրկնել, այլ ամեն տիպ ներկայացնել սորա յատուկ գծերով։

Մի Բրոշիւրում, որից ես օգտւում եմ նորա կենսագրական տեղեկութիւնների համար, բերած է մի երկար շարք Ռոսսիի պատուին եղած ամենամեծ օւացիաների։ Ամեն տեղ ոգևորութիւններ, որոնք ինտելլեկտցիայի տօնախմբութիւնների են փոխարկւել։ Բայց մանաւանդ աչքի են ընկնում Ամերիկայում և մասնաւորապէս Հարաւային Ամերիկայում եղած օւացիաների նկարագրութիւնները. Ամերիկա, որտեղից նա վերադարձել է կատարելապէս բեռնաւորուած ոսկով, թանկագին քարերով և ծաղիկնե-

*րով։ Ամերիկայում նա, շրջելով գեղարուեստագէտների և բանաստեղծների մէջ, մասնակցել է մի քանի դրական երեկոյթներին, ուր նա կարդացել է նոցա լեզուով ոտանաւորներ ամերիկական ամենասիրուած բանաստեղծներից։ Եւ այնտեղ, Ամերիկայում, Բիւ-Ֆանէլրո՝ից սկսած մինչ խաղաղ Ովկիանոսի ափերը՝ Ռոսսիի փչատակը ապրում է խեղճ մարդկանց սրտերում, որոնց համար նա բարերարութիւններ է արել։ Բոլոր եւրոպական քաղաքներից միայն Լոնդոնը չի գնահատել Ռոսսիին։ Թէև հասարակութեան ծափահարութիւններ միշտ շատ են եղած, բայց քննադատութիւնը լռութիւն է պահպանել։*

*Ահա այդպիսի յաղթանակներ էլ նա տարաւ նաև Թիֆլիսում, ուր նորա պատուին եղան մի քանի մեծ ցոյցեր. գալու ժամանակ նորան բաւականի մեծ բազմութիւն դիմաւորեց երկաթուղակայարանում, երաժշտութեան օրքէստով, կէս գիշերին, գլխաւորապէս դերասաններ, որոնցից Պ. Գէորգ Զմշկեանը ողջունեց հռչակաւոր հիւրին հայ դերասանների անունից և մատուցեց ծաղկեայ մեծ փունջ։ Ռոսսիի ներկայացումների միջոցներից մէկում հայ դերասանական խումբը Ռոսսիի պատուին տուեց «Պէպո» Սունդուկեանցի, ուր մանաւանդ տրագիկի կողմից գովեստի արժանացաւ կոմիկ պ. Տէր-Դաւթեանցը. Թիֆլիսի հասարակութիւնը բաղկացած ռուներից, հայերից, վրացիներից նրան տուեց մի մեծ ճաշկերոյթ Օրթաճալայի այգիներից մէկում, ըստ ասիականի, թամադայութեամբ պ. Կարնովիչի և օգնականութեամբ պ. Աբգար Յովհաննիսեանի. իւր բենեֆիսի ներկայացումից յետոյ նա դարձաւ մեծամեծ օւացիաների առարկայ, նորան ձեռքերի վերայ բարձրացրին և կեցցէներով ուղեկցեցին մինչ իւր բնակարանը. վրաց դերասանական խումբը տուեց մի ներկայացում նորա պատուին և մեծ փառահեղութեամբ, ճրագավառ ձիաքարշով և ահագին շարք կառքերի ուղեկցութեամբ նորան տարաւ Կուկիայի այգիներից մէկը ընթրիքի։ Իւր շնորհակալութիւնները Ռոսսին յայտնեց իւր վերջին ներկայացումի վերջը, բեմի վերայից, խոստանալով կրկին դալ Թիֆլիս։*

*Ռոսսիի մասին արդէն յայտնի էր հասարակութեան, որ նորա դերերից մանաւանդ նշանաւոր են Թագաւոր Լիր, Օթելլո, Մակբեթ և Լուդովիկոս XI։ Բացի դոցանից նա երևաց Համլետի, 18 տարեկան Ռոմէոյի (Ռոմէա և Ջիւլիետայի մէջ), Կորրադո՝ի (Ոճրագործի ընտանիք), Շեյլոկ՝ի, Ներոն՝ի և Ռին՝ի դերերում,—բոլորն էլ իտալական լեզուով. հասարակութիւնը հետևում էր խաղին ռուերէն կամ ֆրանսերէն լիբրետտոները ձեռքին։*

*Հասարակութեան մեծամասնութիւնը այդ դերերից մի քանիսի հետ ծանօթ էր Պետրոս Ադամեանի ներկայացումներից և բնական է որ, մանաւանդ սկզբում, Ադամեանի խաղի հետ անընդհատ համեմատութիւններ էր անում. Զը՝պէտք է կարծել թէ դորա մէջ չատ էր խառը ազգասիրութեան զգայմունքը հայերի կողմից։ Դա սխալ է՝ երկու մեծութիւններ իրար հետ համեմատում էին—ուրիշ ոչինչ։ Իմ տպաւորութիւնը այս էր,*

որ Ռոսսին իւր անկասկած հանճարեղ և անկասկած աւելի կատարելագործած խաղով մոռացնել չէր տալիս Աղամեանին։

Իմ գրութիւնը Ռոսսիի մասին երկարեց աւելի քան սպասում էի։ Վերջացնում եմ լոյս չալտնելով, որ Ռոսսիի մեզ մօտ տուած ներկայացումները, որ մեզ համար զգալի գնով են առնուած, ոչ միայն հասարակութեան ճաշակի և հասկացողութեանը զարկ տուած կը լինին, այլ և զպրոց ծառայած կը լինին մեր տեղական ամեն ազգի դերասանների համար, որոնք Ռոսսիի և անձնաւորութեան և տուած ներկայացումների որպէս նաև հասարակութեան մեծ ցուցերի մէջ պէտք է որոնեն ոգևորուելու և ներշնչուելու մի նոր աղբիւր։

ԼՈՒՍԻՆԻ

---

# ԿՈՆԴԱԿ

## Հայոց եկեղեց.—ծխական ուսումնարանների վերաբերեալ, ուղղած թեմերի գերապ. առաջնորդներին։

(Թարգմանութիւն գրաբարից)։

---

«Այն օրից, երբ եկեղեցական—ծխական ուսումնարանները վերստին բացուեցին, մենք հոգ տարանք նոցա բարեկարգութեան մասին և հնարներ մտածեցինք նոցա մտցնելու ցանկալի յառաջադիմութեան և յարատև պահպանութեան վիճակի մէջ։ Այս մտքով անցեալ տարի, կարևոր փոփոխութիւններից յետ, մենք, առաջնորդներիդ հրահանգութեան համար, տուինք մեր եկեղեցական—ծխական ուսումնարանների կանոնները, որոնց մէջ և որոշեցինք ամեն մի պաշտօնէի պարտիքների և իրաւունքների սահմանները և ուսումնարանների կառավարութեան եղանակները։ Այդ կանոնների մէջ նախ սահմանեցինք ուսուցիչների և ուսուցչուհիների ընտրութեան և հաստատութեան կարգը 41—46-րդ յօդուածներով. և ուսուցչութեան պաշտօնի համար ընտրուած անձերի ցուցակը պատրաստելուց յետոյ, հրամայեցինք վարել ըստ ամենայնի համաձայն մեր կանոնների և հրահանգների, ընտրելով պաշտօնեաներին այն ցուցակից. և այս արինք մենք այն զգուշաւոր նախատեսութեամբ, որ ժամանակի ընթացքում (ազգի) և եկեղեցու դաւակների դաստիարակութեան նուիրական գործը չընկնի անպատրաստների և թերուս անձերի ձեռքը։ Արդ՝ շարունակելով մնալ նոյն կարծիքի, մենք չանձն առանք արժանաւոր անձերի նոր ընտրութիւն անելու հոգսը, և, մեզ մօտ եղած տեղեկութիւնները վերստին ստուգելուց յետոյ, մեր նախկին կոնդակների զօրութեան համաձայն, որ

ուղղած ենք Ձեզ, հրամայեցինք այն ընդհանուր ցուցակից բառնալ վեցերորդ (զ), եօթներորդ (է) և ութներորդ (թ) կարգերը, բացառութեամբ մի քանի սակաւաթիւ ընտրեալների, որոնց և չներեցինք արտօնութիւն՝ շարունակել ուսուցչութեան պաշտօնը մեր եկեղեցական—ծխական ուսումնարաններում։ Արդ՝ յանձնարարելով Ձեզ այն վերակազմած ցուցակը, հրամանի պատէր ենք տալիս, որ ճշտիւ հետեւէք մեր վիշատակուած կանոնների ցուցմունքներին և մեզնից հաստատուած ընդհանուր ցուցակին։ Սա ում անցեալ տարի, ստիպմամբ հարկի, լարդելով Ձեզնից ոմանց միջնորդութիւնը, հրամայեցինք կարգել արտաքոյ ընդհանուր ցուցակին մեր եկեղ.-ծխա. ուսումնարանների ուսուցչութեան պաշտօնում զանազան կարգերի թէ եկեղեցականներից և աշխարհականներից, եթէ ներմուծած չեն այս վերակազմեալ ցուցակի մէջ, նոցա ամենեին արձակել և պատուիրել նրանց, որ եթէ կամենան մնալ պաշտօնում, խնդրամատոյց լինին մեր անունով, սահմանուած կարգով։

Տարիներից յետոյ մենք տեղեկացել ենք և դիտենք, որ ուսման ընթացքը և դաստիարակութեան բարոյականը մեր եկեղ.-ծխական ուսումնարաններում կախուած է առաւելապէս վիճակիցը նոցա դաստիարակների, այն է ուսուցիչների և ուսուցչուհիների, որ կարգւում են պաշտօնի մէջ առանձին պայմանախօսութիւնով հոգաբարձութիւնների հետ. դորանից երևան են գալիս անտեղի սակարդութիւններ և ուսուցիչների նշանակելու ուշացումը, բայց որ ամենից գլխաւորն է՝ ուսուցիչների և ուսուցչուհիների ընդհանուր ձգտումը պաշտօնավարութեան այնպիսի տեղեր գնալ, ուր կարող են իրանց ցանկացած ռոճիկը ստանալ. այս պատճառով և ճոխ եկամուտ ունեցող ուսումնարանները, ուսուցիչներից արժանաւորագոյններին ձեռք բերելու համար, սահմանում են թոշակի քանակը աւելի, քան այն ուսումնարանները, որոնք աւելի քիչ արդիւնք ունին իրանց պէտքերը լրացնելու համար։ Դորանից լառաջանում են ուսուցիչների յաճախակի տեղափոխութիւններ, որ ուսման կանոնաւոր ընթացքի խանգարման գլխաւոր պատճառն է. Այս անպատեհութիւնների դէմն առնելու համար մենք մեր կանոնների 33-երորդ յօդուածով սահմանեցինք, որ հոգաբարձուները, իրանց պաշտօնի մէջ մտնելու ժամանակ, կազմեն տարեկան ծախքերի նախահաշիւը իրանց եռամեայ պաշտօնավարութեան համար և, նորա հաստատութիւնը ընդունելուց յետ՝ վարեն ըստ ամենայնի համաձայն այդ նախահաշիւի։

Իսկ 39 երորդ յօդուածով, թողինք հոգաբարձուների ձեռքում իրաւունք՝ սահմանել թոշակ բոլոր պաշտօնեաների, հաստատութեամբ առաջնորդի, նայած իւրաքանչիւր ուսումնարանի դրամական կարողութեան։ Այն ինչ մեր դիտաւորութիւնն էր, որ մեր այս հրահանգներով այէտք է անխոտոր ընթանան բոլոր հոգաբարձութիւնները՝ մեր եկեղ.—ծխական ուսումնարանների բարեկարգութեան և պայծառութեան համար, սրտի ցա-

ւով հաւաստի իմացանք, որ տեղ-տեղ, թէ քաղաքներում և թէ գիւղերում, հոգաբարձութիւնները, չը գիտենք որոնք և ինչ պատճառներով, կանոնների դուրս են եկել և չատերն իսկ անձեռնհաս են եղած լիշեալ նախահաշիւը կազմելու համար։ Արդ՝ կամենալով մեր եկ.-ծխ. ուսումնարանների լառաջադիմութեան գործին դիւրութիւն ընծայել, հրամայեցինք կազմել ուսուցիչների և պաշտօնեաների և նոցա տարեկան թոշակների ցուցակը ամեն մի եկ.-ծխ. ուսումնարանում, որ լանձնում ենք ձեզ գործադրութեան համար։

Այդ ցուցակները, կոչուած «կոպար առաջին և երկրորդ», երկու վիճակի են սահմանում ուսուցիչների կարգը և նոցա տարեկան թոշակների քանակը. ուսումնարաններ, որոնք հարուստ են տարեկան եկամուտներով, պարտ են վճարել ուսուցիչներին և ուսուցչուհիներին՝ կրօնի, հայոց լեզուի, ռուսաց լեզուի և ձեռագործութեան՝ քսանական ռուբլի ժամը. ուսուցիչներին և ուսուցչուհիներին՝ թւաբանութեան, երգեցողութեան, վալելչագրութեան և գծագրութեան՝ տասն և հնգական ռուբլի ժամը։ Այդ է առաջին կոպարը։ Իսկ այն ուսումնարանները, որոնց տարեկան եկամուտը սակաւ է, պէտք է վճարեն ուսուցիչներին և ուսուցչուհիներին՝ կրօնի, հայոց լեզուի, ռուսաց լեզուի և ձեռագործութեան՝ տասն և հնգական ռուբլի ժամը, իսկ ուսուցիչներին և ուսուցչուհիներին՝ թւաբանութեան, բնագիտութեան, երգեցողութեան, վալելչագրութեան և գծագրութեան՝ տասնական ռուբլի ժամը։ Այս է երկրորդ կոպարը։

Սորա համաձայն պէտք է տրուին թոշակներ մեր բոլոր եկեղ.-ծխական ուսումնարաններում, աւելացնելով տարեկան թոշակը նոյն ուսուցիչների և ուսուցչուհիների, որոնք կ'ընտրուեն աւագութեան (աւագ-ուսուց.) երկդասեան ուսումնարաններում՝ 200 ր. և միդասեաններում՝ 100. ր., իսկ վերակացու կարգուած ուսուցիչներին և ուսուցչուհիներին աւելացնել՝ տղայոց երկդասեաններում 50 ր., օրիորդաց երկդասեաններում 100 ր., տղայոց մի դասեաններում՝ 50 ր. և օրիորդաց՝ 75 ր.։

Ցանձնարարում ենք Գերապատուութեանդ հոգալ արժանը, որ վիճակիդ եկեղեցական-ծխական ուսումնարանների հոգաբարձութիւնների նախահաշիւները մտցնեն առաջին կոպարի մէջ և միայն անհնարաւորութեան դէպքում՝ ներսի երկրորդ կոպարը։

---

Մեր ուսումնարանների լարատև պահպանութեանը նպաստելու համար, լորդորէք հոգաբարձութիւններին և աւագ ուսուցիչներին կամ ուսուցչուհիներին տեղ-տեղ, ուր եկամուտը սակաւ է, պահպանել ուսումնարանները, միացնելով բաժանմունքները մի դասարանում հետեւեալ ձեւով։ Կարելի է միացնել մի դասարանի մէջ երեք բաժանմունքները Ա, Բ, Գ. 26 դասերով առաջին բաժանմունքի ձեւով միևնոյն ուսուցչի ձեռքում, որը

կարող լինի մատակարարել երեք միացեալ բաժանմունքների բոլոր ուսմունքները։ Նոյն օրինակով կարելի է միաւորել և չորրորդ և հինգերորդ բաժանմունքները միևնոյն դասարանում—30 դասերով միևնոյն ուսուցչի ձեռքում, որը կարող լինի երկու միացեալ բաժանմունքների բոլոր ուսմունքները մատակարարել։ Եթէ առաջին (Ա.) բաժանմունքում աշակերտների թիւը շատ է մեծ, կարելի է միացնել երկրորդ (Բ.) և երրորդ (Գ.) բաժանմունքները միևնոյն սենեակում 26 դասերով երկրորդ բաժանմունքի ձևով միևնոյն ուսուցչի ձեռքում, որը ձեռնհաս լինի մատակարարել երկու միացեալ բաժանմունքների բոլոր ուսմունքները։ Իսկ աշակերտների թիւ շատ սակաւ լինելու դէպքում՝ կարելի է բաւականանալ միայն մի բաժանմունքով երրորդ բաժանմունքի ձևով՝ աշակերտողների կրթութեան պահանջների համեմատ այն է՝ առաջին բաժանմունքով առանձին, երկրորդովը առանձին և երրորդովը առանձին, աշակերտողների նոր ընդունելութիւն կատարելով երկրորդ կամ երրորդ տարում։

Այդ տեսակ բաշխման օրինակով՝ պէտք է մատակարարուեն և դասերը և թոչակները ամեն մի բաժանմունքի զուգընթացում։

Այն եկեղեցական-ծխական ուսումնարանները, որոնք իրանց եկամուտի առատութեան պատճառով կը կամենան արտակարգ թոչակներ տալ, պատւիրում ենք Գերապատուութեանդ նրանց հրահանգ տալ, որ նոքա կազմեն առանձին կոպարի նախագիծ, լսանէ լանուանէ որոշելով այն անձերին, որոնց կամենում են պաշտօնի հրաւիրել և քանակը այն թոչակների, որ կը կամենան սահմանել իւրաքանչիւր ժամի համար և առաջարկեն ձեզ մեր նկատողութեան և հաստատութեան համար։

Խստիւ պատւիրում ենք Գերապատուութեանդ աշխատել աւելացնելու միդասեան և երկդասեան ուսումնարանների թիւը՝ նոցա կանոնաւոր ամբողջութեան համար և, եթէ հնար է, խոյս տալ բազմացնելուց զուգընթացների թիւը միևնոյն ուսումնարանում։

Սեպուհ պարտք լինի առաջնորդներիդ իւրաքանչիւրին՝ լորդորել ժողովրդականներին և հոգաբարձութիւններին՝ իւրաքանչիւր քաղաքում եկեղեցիների մօտ երկդասեան և միդասեան ուսումնարաններ բանալ երկու սեռի բաղմաթիւ թաղականների պիտոյքները լրացնելու համար. ձեզ առաջնորդներիդ վերալ պարտք ենք դնում օժանդակել բացմանը և պահպանութեանը իւրաքանչիւր փոխանորդութեան մէջ զէթ մի-մի երկդասեան ուսումնարանի՝ բաժանմունքների լիակատար թիւով երկու սեռի համար, քաջ իմանալով, որ այդպիսի ուսումնարանների պահպանութիւնը մեծապէս նպաստելու է հայ մանուկների կրթութեանը կրօնի և լեզուի մէջ և բարգաւաճմանը մեր թեմական դպրոցների և հոգևոր ճեմարանի, որոնք առանց կանոնաւոր զարգացման մեր եկեղեցական—ծխական ուսումնարանների, թերութեան և անկատար վիճակի մէջ կ'ընկնեն։ Մեզ՝ ձեր տւած տեղեկութիւններից գիտենք, որ եկեղեցական արդիւնքների աղբիւրները

մատակարարում են մեր եկեղ.—ծխական ուսումնարաններին աւելի մեծ գումարներ, քան նշանակած են լիշաակուած կոպարներում։

Ակներև է արդեօք, որ երկու սեռի երկդասեան եկեղեցական ուսումնարանների կանոնաւոր և լիակատար կազմակերպութեան բացակայութիւնը ձեր վիճակի թէ փոխանորդութիւններում և թէ բազմամաշ քաղաքներում և աւաններում հետևանք է եկեղեցական արդիւնքների անկոպար տնտեսութեան. ուստի և սրտի ցաւով տեսնում ենք երկու սեռի մանուկների բազմաթիւ երամներ, անխնամ թողած և դատարկաչրջիկ։ Առաջնորդներիդ գործն է դիւրութիւն ընծայել ժողովրդականներին նորահաս սերնդների պէտքերը լրացնելու համար։ Այդ պատճառով, գէթ մի-մի երկդասեան ուսումնարաններ կազմակերպելուց յետ երկու սեռի համար, պատուիրում ենք, որ այն տեղերում, ուր միննոյն տեղում եկեղեցիները բազմաթիւ են, այնտեղ յանուն ամեն մի եկեղեցու բանալ միաղասեան ուսումնարաններ կամ որոշ-որոշ և կամ միացեալ բաժանմունքներով։ Իսկ ինչ վերաբերում է գիւղերի ուսումնարաններին, ուր հնար չը կայ պահպանել նոցա լիակատար բաժանմունքներով, Գերապատութեանդ յանձնարարում ենք տնօրինել, որ ուսումնարանների կազմակերպութիւնը լինի միացած բաժանմունքներով։

Հուսկ ուրեմն պատուիրում ենք Գերապատութեանդ ամենայն արթնութեամբ հսկել հոգաբարձութիւնների և մանկավարժական ժողովների ամեն գործողութիւնների վերայ, ընտրելով ձեր անմիջական պատասխանատուութեամբ հոգաբարձական նախագահութեան և աւագ ուսուցչութեան համար անձեր, մտքով և բարքով հասունացած, իրանց կոչմանը հաւատարիմ, զարդարած քրիստոնէական ջերմեռանդութեան հոգով. առաւելապէս հոգս տարէք, աւագ ուսուցիչներ և աւագ ուսուցչուհիներ ընտրելիս, սոցա մանկավարժական հմտութիւններին և նոցա բնաւորութեան հեզ բարքին։ Տնօրինեցէք որ նոքա յանձն առնեն ոչ աւելի քան 24 ժամ և ոչ պակաս քան 18 ժամ, յատկացնելով նոցա կոպարաւոր դասերի պակասորդը միւս ուսուցիչներից մէկն ու մէկին, և միայն չատ բացառական դէպքերում թոյլ տաք մի ուրիշին՝ կոպարի անձերի քանակութիւնից դուրս, և այն մէկից ոչ աւելի։

Եւ եթէ հնար լինի, ընտրեցէք աւագ ուսուցչութեան համար քահանաներից արժանաւորագոյններին, ընդհանուր ցուցակի միջից, յատկացնելով նրանց և կրօնի դասերը։

---